ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Սեպտեմբերի 2-ին, կիրակի. *Մայր Տաճարում պատարագեց արժանապատիվ Տ. Մկրտիչ ավագ քահանա Մկրտչյանը։*

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

* * *

Սեպտեմբերի 6-ին, հինգշաբթի, *Մայր Աթոռ ժամանեց Նյու-Ջերսիի (ԱՄՆ) հայոց հոգևոր հովիվ արժանապատիվ Տ. Մամբրե քահանա Գուզոյանը։ Մայր Տաճարում իր ուխտն ու աղոթքը կատարելուց հետո, Տ. Մամբրե քահանան ներկայացավ Վեհափառ Հայրապետին, Նրա Ս. Աչք համբուրելու համար։*

Արժանապատիվ Տ. Մամբրե քահանա Գուզոյանը իր հովվությունը վերադարձավ սեպտեմբերի 13-ին։

* * *

Սեպտեմբերի 8-ին, շաբաթ, *«Տօն ծննդեան Սրբուհւոյ Կուսին Մարիամու յԱննայէ»։ Մայր Տաճարում պատարագեց հոգեշնորհ Տ. Հարություն վարդապետ Մատենչյանը։*

* * *

Սեպտեմբերի 11-ին, երեքշաբթի. *Մայր Աթոռ ժամանեց գերաշնորհ Տ. Զգոն եպիսկոպոս Տեր-Հակոբյանը։*

Գերաշնորհ սրբազան հոր Երևանի քաղաքային կայարանում դիմավորեց հոգեշնորհ Տ. Գրիգոր վարդապետ Եղիայանը։

Մայր Տաճարում իր ուխտն ու աղոթքը կատարելուց հետո, սրբազանը առաջնորդվեց Վեհարան, Վեհափառ Հայրապետի օրհնությունը ստանալու։

* * *

Սեպտեմբերի 16-ին, կիրակի, *«Խաչվերացում»։ Մայր Տաճարում հանդիսավոր սուրբ պատարագ մատուցեց գերաշնորհ Տ. Զգոն եպիսկոպոս Տեր-Հակոբյանը։*

Սրբազան պատարագիչը իր քարոզում վեր հանեց Ս. Խաչի փրկագործության խորհրդի նշանակությունը քրիստոնյա մարդու հոգևոր կյանքի աճման համար։

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

Երեկոյան ժամերգությունից առաջ, ավանդական հանդիսությամբ, Մայր Տաճարի շրջափակում, Վեհափառ Հայրապետի հանդիսադրությամբ, կատարվեց վերջին «Անդաստան»-ը։

Խաչվերացի տոնի առթիվ, Երևանի Ս. Սարգիս առաջնորդանիստ եկեղեցում պատարագեց և քարոզեց հոգեշնորհ Տ. Ներսես վարդապետ Պողոսյանը բնաբան ունենալով «Խաչ քո երգիցի մեզ ապաւէն բոցանիշ փայլմամբ իւրով»։

* * *

Սեպտեմբերի 17-ին, երկուշաբթի, «Ցիշատակ մեռելոց»։ Մայր Տաճարում պատարագեց հոգեշնորհ Տ. Եղիշե վարդապետ Գարաջյանը։

Հավարտ սուրբ պատարագի կատարվեց Հոգեհանգիստ ավասն համօրէն ննջեցելոց»։

* * *

Սեպտեմբերի 17-ին, երկուշաբթի, Մայր Աթոռ ժամանեց Կիլիկյան օրինապահ միաբանության երիտասարդ անդամներից հոգեշնորհ Տ. Գևորգ վարդապետ Կարպիսյանը։

Երևանի օդանավակայանում հոգեշնորհ Տ. Գևորգ վարդապետին դիմավորեց հոգեշնորհ Տ. Մեսրոպ վարդապետ Պալյանը։

Վեհափառ Հայրապետը բարեհաճեց ընդունել Տ. Գևորգ վարդապետին։

* * *

Սեպտեմբերի 18-ին, երեքշաբթի, Մայր Աթոռ ժամանեցին գերաշնորհ Տ. Ասողիկ եպիսկոպոս Ղազարյանը և ճարտարապետ պր. Եդվարդ Ութուչյանը։

Հարգելի հյուրերին դիմավորեց հոգեշնորհ Տ. Ներսես վարդապետը։

Գերաշնորհ Տ. Ասողիկ սրբազանը և պր. Ութուչյանը ընդունվեցին Վեհափառ Հայրապետի կողմից։